ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ԱԴԸԳ 28-2023
Սուբսիդիա տրամադրելու մասին

ք. Երևան «15» փետրվար 2023 թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը (այսուհետ՝ Պատվիրատու), ի դեմս նախարարության գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող Վ. Գասպարյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Տեխնիկական ստեղծագործության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ը (այսուհետև՝ Կատարող), ի դեմս կազմակերպության տնօրեն Ն. Ավագյանի, մյուս կողմից, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2022 թվականի դեկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության 2023 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» թիվ 2111-Ն որոշումը (այսուհետև՝ որոշում) և ՀՀ կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 1937-Ն որոշմամբ հաստատված կարգի համաձայն կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1. Սույն պայմանագրով Պատվիրատուն պարտավորվում է որոշման «1148. Արտադպրոցական դաստիարակության ծրագիր» բյուջետային ծրագրի «11001. Արտադպրոցական դաստիարակություն» միջոցառման շրջանակներում պետական աջակցություն տրամադրել Կատարողին, որի շրջանակներում Կատարողն իրականացնում է կրթության, մշակույթի կամ սպորտի ոլորտի միջոցառումների (այսուհետ՝ Միջոցառում) կազմակերպումը և անցկացումը՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող Հավելված N 1-ի:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1.Պատվիրատուն իրավունք ունի.

2.1.1. ցանկացած ժամանակ (այդ թվում՝ ՀՀ ֆինանսների նախարարության և պետական այլ մարմինների միջոցով) ստուգելու կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը, ինչպես նաև օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնել ներքին աուդիտ,

2.1.2. պահանջել կատարողից ներկայացնել եռամսյակային և տարեկան հաշվետվություններ օրենսդրությամբ սահմանված ժամկետներում,

2.1.3. ՀՀ օրենսդրությամբ և սույն պայմանագրով սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունել մատուցվող ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ,

2.1.4. կատարողից պարբերաբար պահանջել ու ստանալ տեղեկություն սույն պայմանագրի կատարման ընթացքի մասին,

2.1.5. առանց մատուցված ծառայությունների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծել սույն պայմանագիրը և պահանջել հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. առանց հիմնավոր պատճառի կատարողը ժամանակին չի սկսում ծառայությունների մատուցումը կամ ծառայության մատուցման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու

բ. կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է ծառայությունների մատուցման ժամկետները,

գ. մատուցված ծառայությունները չեն համապատասխանում ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին,

2.1.6. կատարողի կողմից սույն պայմանագրի պահանջները չկատարելու դեպքում դադարեցնել ֆինանսավորումը՝ մինչև թերությունների վերացումը,

2.1.7. կատարողի կողմից սույն պայմանագրով նախատեսված ոչ ֆինանսական ցուցանիշների թերկատարման դեպքում համապատասխան չափով նվազեցնել ֆինանսավորումը,

2.2.Կատարողն իրավունք ունի.

2.2.1. պատվիրատուից պահանջել ընդունել սույն պայմանագրի 1.1-ին կետում նշված և կազմակերպության կողմից պատշաճ ձևով ու կարգով մատուցված ծառայությունները,

2.2.2. մատուցված ծառայության արդյունքը պատվիրատուի կողմից ընդունվելու դեպքում պահանջել վճարել իրեն հասանելիք գումարը՝ սույն պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում և կարգով,

2.2.3. պատվիրատուից պահանջել վերացնել կազմակերպության գործողություններից (անգործությունից) անկախ՝ պատվիրատուի մեղքով սույն պայմանագրի կատարման համար առաջացած խոչընդոտները կամ վերանայել սույն պայմանագրի պայմանները,

2.2.4. իրականացված միջոցառման արդյունքը պատվիրատուի կողմից ընդունվելու և պատվիրատուի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծել սույն պայմանագիրը և պահանջել հատուցել իրեն պատճառված վնասները,

2.2.5. Վաղաժամկետ լուծել սույն պայմանագիրը՝ սույն պայմանագրով կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և դեպքերում:

2.3.Պատվիրատուն պարտավոր է.

2.3.1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և (կամ) սույն պայմանագրով նախատեսված դեպքերում իր կանոնադրությունով սահմանված իրավասությունների շրջանակներում աջակցել կատարողին, այդ թվում՝ կատարողին ցուցաբերել մեթոդական և կազմակերպական օգնություն,

2.3.2. կատարողից ընդունել պատշաճ ձևով ու կարգով մատուցված ծառայությունները և կազմված ու ներկայացված հաշվետվությունները,

2.3.3. իրականացնել սույն պայմանագրով նախատեսված այլ աշխատանքներ:

2.4. Կատարողը պարտավոր է.

2.4.1. պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել սույն պայմանագրով սահմանված նպատակներով,

2.4.2. կատարել պատվիրատուի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները,

2.4.3. պատվիրատուին անհապաղ հայտնել սույն պայմանագրի կատարման համար առաջացած խոչընդոտների մասին և միաժամանակ ձեռնարկել իր կողմից հնարավոր բոլոր միջոցները՝ այդ խոչընդոտներն անհապաղ վերացնելու համար,

2.4.4. սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել ծառայության մատուցմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու պատվիրատուի հնարավորությունը,

2.4.5. իրականացնել սույն պայմանագրի շրջանակներում պատվիրատուի կողմից տրամադրված գումարների հաշվապահական հաշվառման վարում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով,

2.4.6. պատվիրատուի պահանջով նրան հաղորդել տեղեկատվություն ծառայությունների մատուցման ընթացքի մասին, ընդ որում՝ Կատարողը պատասխանատվություն է կրում հաշվետվությամբ ներկայացված տվյալների հավաստիության համար,

2.4.7. մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 10-ը Պետական մարմին ներկայացնել նախորդ եռամսյակի ընթացքում իրականացված Միջոցառումների վերաբերյալ ոչ ֆինանսական հաշվետվություն՝ համաձայն Հավելված N 2-ի,

2.4.8. պատվիրատուին ներկայացնել եռամսյակային ու տարեկան հաշվետվություններ՝ համաձայն ՀՀ ֆինանսների նախարարի 2013 թվականի փետրվարի 4-ի N 104-Ն և 2019 թվականի մարտի 13-ի N 254-Ն հրամանների, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ և իրավական այլ ակտերով նախատեսված ձևով ու կարգով,

2.4.9. ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

3. ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՐԳԸ

3.1.Սույն պայմանագրով նախատեսված ՀՀ բյուջեից պետական աջակցության առավելագույն չափը կազմում է 31656200 (Երեսունմեկ միլիոն վեց հարյուր հիսունվեց հազար երկու հարյուր) ՀՀ դրամ:

3.2.Պատվիրատուն 3.1 կետում նշված գումարը «Հայաստանի Հանրապետության 2023 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի համաձայն փոխանցում է Կատարողի հաշվին համամասնորեն՝ ամսական կտրվածքով՝ ոչ ուշ քան տվյալ ամսվա 10-ը: Վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվին փոխանցելու միջոցով:

4. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

4.1.Կողմերը պատասխանատվություն են կրում սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

5. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆՈՒՄ-ՀԱՆՁՆՈՒՄԸ

5.1.Սույն պայմանագրով նախատեսված ծառայության ընդունումը կատարվում է համաձայն հանձնման-ընդունման ակտի՝ մինչև հաջորդող տարվա հունվարի 20-ը:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

6.1.Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե այդ իրավիճակը ստեղծվել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են. բնական աղետները, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ իրավիճակի հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք

անհնարին են դարձնում սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը:

7. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

7.1.Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում և կողմերի համար պարտադիր է դառնում ստորագրման պահից, գործում է մինչև պարտավորությունների լրիվ կատարումը:

7.2.Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր /համաձայնագրեր/ կնքելու միջոցով: Վերջիններս կհանդիսանան սույն պայմանագրի անբաժանելի մասը:

7.3. Սույն պայմանագիրը կազմված 6 էջից հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող 2 օրինակից: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.4. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից, տարածվում է 2023 թվականի հունվարի 1-ից հետո ծագած իրավահարաբերությունների վրա և գործում է մինչև կողմերի ստանձնած պարտավորությունների ամբողջ ծավալով կատարումը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐՆ ՈՒ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն

ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3
Կառավարական տուն 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

Հ/Հ 900011005445

ՀՎՀՀ 02698732

գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող

_____Վ. Գասպարյան
/ստորագրություն/ Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
«Տեխնիկական ստեղծագործության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ

ք. Երևան, Նոր Նորք
5-րդ մ/ջ 159 դպրոցի ուս. մասնաշենք
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

Հ/Հ 900018005653

ՀՎՀՀ 1805833

տնօրենի պարտականությունները կատարող

Digitally signed by AVAGYAN NELLI 7205750273
Date: 2023.02.15 15:38:36 AMT

_____Ն. Ավագյան
/ստորագրություն/ Կ.Տ

Հավելված N 1
«15» փետրվարի 2023 թ. կնքված
N ԱԴԸԳ 28-2023 պայմանագրի

«Արտադպրոցական դաստիարակություն» ծրագրային ոչ ֆինանսական ցուցանիշներ

	Իրականացվելիք միջոցառման անվանումը	Համառոտ բովանդակությունը	Գնահատման չափանիշները	Վերջնաժամկետը	Պահանջվող գումարը (դրամ)
1.	Արտադպրոցական դաստիարակություն	«Տեխնիկական ստեղծագործության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից արտադպրոցական դաստիարակության իրականացում, ազատ ժամանցի ապահովում, ստեղծագործական ունակությունների զարգացում և խթանում	Կազմակերպության առնվազն 32 խմբերում ընդգրկված 300 սան	30.12.2023 թ.	31656200

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն

ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3
Կառավարական տուն 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

Հ/Հ 900011005445

ՀՎՀՀ 02698732

գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող

_____Վ. Գասպարյան
/ստորագրություն/ Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
«Տեխնիկական ստեղծագործության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ

ք. Երևան, Նոր Նորք
5-րդ մ/շ 159 դպրոցի ուս. մասնաշենք
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

Հ/Հ 900018005653

ՀՎՀՀ 1805833

տնօրենի պարտականությունները կատարող

Digitally signed by AVAGYAN NELLI
7205750273
Date: 2023.02.15 15:37:39 AMT

_____Ն. Ավագյան
/ստորագրություն/ Կ.Տ

Հավելված N 2
«15» փետրվարի 2023 թ. կնքված
ԱԴԲԳ 28-2023 պայմանագրի

Կազմակերպության անվանումը .....
Պայմանագրի կնքման ամսաթիվը և համարը .....

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

.....
(եռամսյակ)

ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ծրագրի կամ միջոցառման անվանումը	Չափորոշիչը (նկարագրությունը)	Չափորոշիչի տեսակը	Ոչ ֆինանսական ցուցանիշներ					
			Ցուցանիշի հաստատված կանխատեսումը հաշվետու ժամանակահատվածի համար	Ցուցանիշի փոփոխություններն ըստ համապատասխան իրավական ակտի (+/-)	Ճշտված ցուցանիշը հաշվետու ժամանակահատվածի համար (սյ. 1+սյ.2)	Փաստացի ցուցանիշը (կատարված և ընդունված) հաշվետու ժամանակահատվածում	Հաստատված և փաստացի ցուցանիշների տարբերությունը (սյ.4-սյ.3)	Տարբերության պատճառը (սյ.2-ում նշված իրավական ակտերի հղումները և սյ.5-ում նշված տարբերության պարզաբանումները)
Ա	Բ	Գ	1	2	3	4	5	6
Արտադպրոցական դաստիարակություն	Արտադպրոցական դաստիարակության իրականացում, ազատ ժամանցի ապահովում, ստեղծագործական ունակությունների զարգացում և խթանում	սան, որից՝						
		տղա						
		աղջիկ						
		մանկավարժական դրույք						
		մանկավարժիչների թիվ						
		խումբ, այդ թվում՝						
		...						

Կազմակերպության տնօրեն
Հաշվապահ

«.....» ..... 2023 թ.

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն

ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3
Կառավարական տուն 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

Հ/Հ 900011005445
ՀՎՀՀ 02698732

գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող

ԿԱՏԱՐՈՂ
«Տեխնիկական ստեղծագործության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ

ք. Երևան, Նոր Նորք
5-րդ մ/շ 159 դպրոցի ուս. մասնաշենք
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

Հ/Հ 900018005653
ՀՎՀՀ 1805833

տնօրենի պարտականությունները կատարող

Digitally signed by AVAGYAN NELLI
7205750273
Date: 2023.02.15 15: